Սուրեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ծնվել է 1974թ. հունվարի 14-ին, Երևանում:

Կրթությունը՝

1992-1997թթ. — Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Թուրքագիտության ամբիոն՝ արևելագետ-բանասերի, թարգմանչի մասնագիտություն որակավորմամբ

1998թ. — Կորեական հետազոտությունների դիպլոմ, Կյունհի համալսարան, Սեուլ, Կորեա

2000թ. — Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

2004-2005թթ. — Միջազգային անվտանգության քաղաքականության 19-րդ դասընթաց, Ժնևի անվտանգության քաղաքականության կենտրոն, Ժնև, Շվեյցարիա

Աշխատանքային գործունեությունը՝

1997-2003թթ. — ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ավագ լաբորանտ, կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար

2003-2007թթ. — ՀՀ ԱԳՆ Ասիայի, Օվկիանիայի և Աֆրիկայի վարչության Հյուսիսարևելյան և Հարավային Ասիայի երկրների բաժնի կցորդ, այնուհետև՝ երրորդ քարտուղար

2007- 2010թթ. — Չինաստանում ՀՀ դեսպանության երրորդ քարտուղար

2010-2011թթ. — ՀՀ ԱԳՆ Բազմակողմ և երկկողմ տնտեսական համագործակցության վարչության երկկողմ տնտեսական հարաբերությունների բաժնի երրորդ քարտուղար

2011-2015թթ. — Ղազախստանում ՀՀ դեսպանության երրորդ, ապա՝ 2-րդ քարտուղար

2015-2016թթ. — ՀՀ ԱԳՆ Ասիայի, Օվկիանիայի և Աֆրիկայի վարչության Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների բաժնի երկրորդ, ապա՝ առաջին քարտուղար, այնուհետև՝ բաժնի վարիչ

2016-2020թթ. — Չինաստանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար

2020-2022թթ. — ՀՀ ԱԳՆ Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների վարչության Հարավարևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների բաժնի վարիչ

2022-2024թթ. — ՀՀ ԱԳՆ Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների վարչության պետի պաշտոնակատար

Օտար լեզուներ՝

Անգլերեն, թուրքերեն, ռուսերեն, գերմաներեն

Դիվանագիտական աստիճանը՝

Խորհրդական:

Ընտանեկան կարգավիճակը՝

Ամուսնացած չէ:

2024 թվականի փետրվարի 15-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Հանոյ):